



Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N----- 83
< 29 04 >----- 2014թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ
ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշման պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. 2014 թվականի մայիսի 10-ին Արտաշատ քաղաքում կազմակերպել և անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Մասնակի փլուզված շենքում որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով:

2. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավար նշանակել՝ Արարատի մարզային փրկարարական վարչության պետ փ/ճ գնդապետ Մ. Մարգարյանին.

3. Ուսումնավարժությանն ընդգրկել.

1) Արարատի մարզային փրկարարական վարչությունը

2) Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատը

3) Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ «Արաքս մասնաճյուղ» Արտաշատի էլեկտրական ցանցերը

4) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժինը

5) <<Արտաշատի բժշկական կենտրոն>> ՓԲԸ շտապօգնություն բրիգադը

6) <<Հայրուսգազարդ>> ՓԲԸ Արտաշատի ԳԳՄ Արտաշատի ՏՏ

4. Ուսումնավարժության ղեկավարին՝

1) Ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը.

2) մասնակիցներին ծանոթացնել իրենց առջև դրված խնդիրներին.

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մայիսի 7-ին:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով.

2) ուսումնավարժության ընթացքում պահպանել անվտանգության կանոնները.

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն կարգադրությունը հայտարարել ըստ առնչության:

7. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Արարատի

մարզային փրկարարական վարչության պետ փ/ծ գնդապետ Մ. Մարգարյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ